ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 նոյեմբերի 2026թ. թիվ 768-Ա

Ա.ԱՆՏԻՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158, 160, 164 հոդվածների, ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 22.1 մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ, հաշվի առնելով Ա.Անտինյանի դիմումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտի Հ.Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Արմեն Անտինյանին տրամադրել 2026-2027թթ. աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդը ս/թ նոյեմբերի 9-ից մինչև դեկտեմբերի 11-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր:

2. Ա.Անտինյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի դեկտեմբերի 14-ից:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետին՝

Կից գրությամբ սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ա.Անտինյանի պարտականությունները կատարող նշանակելու համար:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-11-02 17:01:16 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. նոյեմբերի 2
ք.Վանաձոր